Ա Զ Դ

Ուրախ եմք ի սիրտ և ի հոգի, զի յաջողութեամբ Տեառն կատարելով մերովսանն Էրարատ ամսագրոյ մերոյ Գ. շրջանը, ներկայ թուովս ողջունեմք զԳ. շրջան։

Ձկամիմք այժմէն մեծամեծս խոստանալ, այլ միայն մեր անցեալ գործողութեանց արդիւնքը երաշխաւոր կացուցանեմք ապագայի համար, որով պէտք է հաւոզուին սիրելի ազգայինք, թէ մեր ամեն ջանք և ճիգ գլխաւորապէս յօգուտ և ի լուսաւորութիւն մերազնէից է, և խելամուտ լինին, թէ՝ Էրարատը լոյս տեսած օրէն հետզհետէ, քանի՞ կարևոր և արդիւնաւոր փոփոխութիւններ ստացաւ և յառաջադիմեց ըստ բաւականին՝ յաղթելով բազմազգի խոչընդոտից և իւրաքանչիւր քայլափոխի մէջ երևցող դժուարութեանց։

Արդարև պէտք է խոստովանեմք, որ տակաւին չեմք կարողացած մեր բարձր ու վսեմ վիճակին միանգամայն ծանր պարտաւորութեանց համապատասխան արդիւնքներ ընծայել, ինչպէս ի սրտէ փափաքիմք և ջանամք, բայց և այնպէս՝ անտարակոյս եմք՝ զի ուշիմ և հեռատես անձինք կարեն վկայել ըստ խղճից իւրեանց, թէ մեր քայլերը ըստ բաւականին մեծ եղած են՝ նայելով մեր դանուած դիրքին՝ տեղւոյն և այլ անհրաժեշտ պահանջեալ միջոցաց։

Գոհ եմք մեր սիրելի ազգայիններէն, որ մեծաւ համակրութեամբ խրախուսեն զԷրարատ, և օր աւուր յաւելլով ի թիւս բաժանորդագրութեանց նպաստեն մեր աշխատութեանց։ Յորմէ քաջալերեալ Էրարատ յաւելու մի թերթ ևս՝ այսինքն՝ իւրաքանչիւր ամիս՝ փոխանակ 4ի՝ 5 թերթէ բաղկանալով և մերթ ընդ մերթ մեր քաղցրիկ Հայրենեաց՝ Հայաստանի՝ վանօրէից՝ քաղաքաց՝ աւերակաց և երևելի ինչ ինչ տեղեաց տեսարանաց պատկերներով զարդարուած պիտի հրատարակուի։ Եւ ըստ որում՝ տարեգլուխը լինելով ի Մայիսէ՝ ոչ սակաւ շփոթութիւնք պատահէին ի տարեկան հաշիւս և ի բաժանորդագրութիւնս, ուստի՝ յառաջակայ շրջանը ութնամեայ պէտք է լինի, 1872 թուականին Յունվար ամիսէն Ա. տարեգլուխը

սկսանելոյ համար՝ պակասեալ չորս ամսոց թերթքը բաժանելով ի վերայ ութն ամսոց, չորս ամիս ութն ութն՝ և չորս ամիս եօթնական թերթք պիտի պարունակեն ամսագիրք։

Արդ յուսամք՝ որ փոխադարձ համակրութիւնք և փոյթեռանդն ջանք՝ մեր և ազգայնոց՝ անշուշտ հետզհետէ առաւել ևս զարգացնեն զԱրարատ թէ ի ներքին բովանդակութիւնս և թէ յարտաքին զարդս։

Այս առթիւ չեմք կարող լռութեան տալ մեր գոհունակութիւնքը առ Գործակալս Արարատայ՝ մանաւանդ առ այնոսիկ՝ որք աջակցեալ մեր բարի նպատակաց և աշխատութեանց՝ արդիւնաւոր հանդիսացուցին իւրեանց ջանքերը, անտարակոյս առաւել շնորհակալեաց արժանի եղեն, ոյք նոյնպիսի խանդ և ջանք եռանդուն զգացմամբք ըղձանան փայլեցնել և ի ներքոյ Գ. շրջանն։

Այնպէս չկարեմք քօղարկել մեր գոհունակութիւնքը առ ազգայինս ոմանս և առ Հայազն ուսանողս ի Ս. Պետերբուրգ, որք բանասիրական յօդուածներով և թարգմանութեամբք օգնեն Արարատ ամսագրոյս մերում, և անհերկրայ եմք, զի ունին շարունակել իւրեանց աշխատութիւնքը յօդուտ և ի դատարակութիւն Հայրենեաց։